

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-11/24-I/IGES

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Զոն Կոստիկի Կարապետյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 174 822 440 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 174 822 440 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա

Կազմակերպություն


ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և
ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24
Հ/հ՝ 900011024115
ՀՎՀՀ՝ 00005673
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

ք. Գյումրի, Վ.Սարգսյան 5
Հ/հ՝ 900218001080
ՀՎՀՀ՝ 05504455
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝


(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ



Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Զոն Կոստիկի Կարապետյան



Զոն Կոստիկի Կարապետյան


**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Ջոն Կոստիկի Կարապետյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-11/24-I/IGES պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 174 822 440 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝


(ստորագրություն)



Կազմակերպություն

տնօրեն՝


(ստորագրություն)

Ջոն Կոստիկի Կարապետյան

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	24
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	30
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	12
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	15
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	2
Գրքեր, մենագրություններ՝	2
Գիտաժողովի նյութեր՝	20
Արտոնագրեր՝	3

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Ջոն Գուտիկի Կարապետյան

Կազմակերպության գիտքարտուղար՝

(ստորագրություն)

Գրիգորյան Վանանդ Գուրգենի



Կ. Տ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ
 «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

«Պրամ

Հ/հ	Հողվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	154 876 000	30 975 200	38 719 000	38 719 000	46 462 800
2.	տնտեսական ծախսեր՝	8 081 000	1 616 200	2 020 250	2 020 250	2 424 300
3.	այլ ծախսեր՝	11 865 440	2 373 088	2 966 360	2 966 360	3 559 632
Ընդամենը՝		174 822 440	34 964 488	43 705 610	43 705 610	52 446 732

Կազմակերպության տնօրեն՝


 (ստորագրություն) Զեն Կոստիկի Կարապետյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն) Ծաղիկ Շահվազի Տոխանսիսյան
 Կ. Տ.



ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

«Ն դրամ»

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	8 081 000
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	4 200 000
2.	գազի ծառայություն	2 500 000
3.	ջրամատակարարման ծառայություն	50 000
4.	կապի ծառայություն	900 000
5.	աղբահանություն	431 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	11 865 440
1.	գործուղում	4 200 000
2.	սարք, սարքավորումներ և նյութեր	6 900 000
3.	վառելիք	765 440

Կազմակերպության տնօրեն՝


[Ստորագրություն]
 (ստորագրություն)

Զոն Կոստիկի Կարապետյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

[Ստորագրություն]
 (ստորագրություն)

Ծաղիկ Շահվալադի
 Հովհաննիսյան



Կ. Տ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

- A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
B - ամիսների քանակ E - գումարային
C - աշխատաժամանակի ռեժիմ


«Հ դրամ»

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Կարապետյան Զոն Կոստիկի	Տնօրեն	500 000	12	հիմնական	40	6 000 000
Կարապետյան Կարինե Արտաշեսի	Գիտական գծով փոխտնօրեն	400 000	12	հիմնական	40	4 800 000
Գրիգորյան Վանանդ Գուրգենի	Գիտական քարտուղար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Մուրադյան Էդուարդ Կարապետի	Տնտեսական գծով փոխտնօրեն	100 000	12	հիմնական	40	1 200 000
Հովհաննիսյան Ծաղիկ Շահվալադի	Գլխավոր հաշվապահ	180 000	12	հիմնական	40	2 160 000
Փիլոսյան Անահիտ Հովհաննեսի	Կադրերի գծով տեսուչ	150 000	12	հիմնական	40	1 800 000
Գևորգյան Սիրվարդ Կարապետի	Գրադարանի վարիչ	96 000	12	հիմնական	40	1 152 000
Ավետյան Ռաիսա Գագիկի	Թարգմանիչ	104 000	12	համատեղություն	20	1 248 000
Մնացականյան Նորայր Վարազդատի	Արտադրամասի պետ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Սահակյան Սամվել Սուրենի	Պահեստի պատասխանատու	96 000	12	հիմնական	40	1 152 000
Գինոսյան Նեկտար Մկրտչի	Մաքրուհի	100 000	12	հիմնական	40	1 200 000
Հարությունյան Վահան Կորյունի	Պահակ	141 000	12	հիմնական	40	1 692 000
Պողոսյան Էդվարդ Հովհաննեսի	Պահակ	141 000	12	հիմնական	40	1 692 000
Բաղդասարյան Գրիգոր Համբարձումի	Պահակ	141 000	12	հիմնական	40	1 692 000
Զատինյան Սարգիս Ժորիկի	Պատասխանատու, պահակ	150 000	12	հիմնական	40	1 800 000
Վարդանյան Արմենակ Մելիքի	Պահակ	141 000	12	հիմնական	40	1 692 000
Սուքիասյան Արման Բաբկենի	Պահակ	141 000	12	հիմնական	40	1 692 000
Կարապետյան Աշոտ Հովհաննեսի	Հնոցապան	100 000	12	հիմնական	40	1 200 000
Կարապետյան Ռոզա Կոստիկի	Գնումների համակարգող	40 000	12	ներքին համատեղություն	20	480 000
Գոգորյան Սայադ Միսաքի	Տեխնիկ	40 000	12	հիմնական	20	480 000
Բաղեյան Հասմիկ Անուշավանի	Տեխնիկ	96 000	12	հիմնական	20	1 152 000
Համբարձումյան Սուրեն Արտուշի	Տեխնիկ	90 000	12	համատեղություն	10	1 080 000
Գիտական անձնակազմ						
Լաբորատորիա						
Ինժեներային սեյսմաբանության, սեյսմիկ ազդեցությունների վերլուծության և սեյսմիկ վտանգի գնահատման						

Կարապետյան Ջոն Կոստիկի	Ղեկավար	225 000	12	ներքին համատեղություն	20	2 700 000
Գրիգորյան Վանանդ Գուրգենի	Առաջատար գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	20	0
Մկրտչյան Գոհարիկ Արտավազի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Հայրապետյան Հովհաննես Յուրայի	Գիտաշխատող	120 000	12	համատեղություն	20	1 440 000
Սավոյան Սավա Լևոնի	Գիտաշխատող	116 000	12	համատեղություն	20	1 392 000
Մաթևոսյան Գուրգեն Միշայի	Կրտսեր գիտաշխատող	90 000	12	համատեղություն	20	1 080 000
Հովհաննիսյան Լիլյա Խաչատուրի	Կրտսեր գիտաշխատող	200 000	12	հիմնական	40	2 400 000
Հարությունյան Կարինե Պապիկի	Ավագ ճարտարագետ	180 000	12	հիմնական	40	2 160 000
Պողոսյան Գևորգ Էդվարդի	Ավագ ճարտարագետ	157 000	12	հիմնական	40	1 884 000
Էմիլի Կիրակոսյան Սպանդարի	Լաբորանտ	110 000	12	հիմնական	10	1 320 000
Լաբորատորիա Հիդրոերկրադինամիկայի և էկոերկրաֆիզկայի						
Մինասյան Ռոբերտ Սարիքելի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Փաշայան Ռոմելա Արտավազի	Առաջատար գիտաշխատող	420 000	12	հիմնական	40	5 040 000
Մարգարյան Սոս Սամվելի	Ավագ գիտաշխատող	160 000	12	համատեղություն	20	1 920 000
Քարամյան Ռաֆֆի Արայի	Գիտաշխատող	130 000	12	համատեղություն	20	1 560 000
Շահինյան Շահեն Ջոհրաբի	Գիտաշխատող	120 000	12	համատեղություն	20	1 440 000
Գևորգյան Անի Համբարձումի	Գիտաշխատող	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Թովմասյան Քրիստինա Գագիկի	Ավագ ճարտարագետ	157 000	12	հիմնական	40	1 884 000
Դանիելյան Ալբերտ Պավելի	Ճարտարագետ	70 000	12	հիմնական	20	840 000
Սիմոնյան Սմբատ Նազարեթի	Ճարտարագետ	70 000	12	հիմնական	20	840 000
Լաբորատորիա Երկրաֆիզիկական սարքաշինության և չափագիտության						
Գասպարյան Աշոտ Սարգսի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Միրանյան Մամիկոն Արտեմի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Բայբուրդյան Ռուզաննա Ռաֆիկի	Ավագ ճարտարագետ	79 000	12	հիմնական	20	948 000
Լաբորատորիա Կառուցների սեյսմակայունության և շինարարական կոնստրուկցիաների						
Հովհաննիսյան Սևադա Մկրտչի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Էլոյան Ասատուր Վանոյի	Ավագ գիտաշխատող	300 300	12	հիմնական	40	3 603 600
Հովսեփյան Աղասի Այվազի	Գիտաշխատող	120 000	12	համատեղություն	20	1 440 000
Սեփապոսյան Աննա Գագիկի	Ճարտարագետ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Մեսրոպյան Արման Հայկի	Ճարտարագետ	60 000	12	համատեղություն	20	720 000
Լաբորատորիա Երկրի մագնիսականության						
Սիմոնյան Անահիտ Հովհաննեսի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Մկրտչյան Կարուշ Շիրակի	Ավագ գիտաշխատող	300 300	12	հիմնական	40	3 603 600
Օհանյան Մարինե Վանիկի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
	Կրտսեր գիտաշխատող			հիմնական		

Մեծոյան Տիգրան Արամի		180 000	12		40	2 160 000
Լաբորատորիա Կառուցվածքային երկրաֆիզիկայի, խորքային պրոցեսների և երկրադինամիկայի						
Ավետիսյան Անդրեյ Մերգևուհի	Առաջատար գիտաշխատող	210 000	12	համատեղություն	20	2 520 000
Ավդալյան Արման Հրաչի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Զախալյան Աղվան Մասիսի	Ավագ ճարտարագետ	157 000	12	հիմնական	40	1 884 000
Լաբորատորիա Սեյսմաբանության և երկրաշարժերի կանխագուշակման						
Գյոդակյան Էդուարդ Գրիգորի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Մկրտչյան Մարիամ Բորիսի	Ավագ գիտաշխատող	300 300	12	հիմնական	40	3 603 600
Սահակյան Բարկեն Վազգենի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Մկրտչյան Մերի Արտուշի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Կարապետյան Ռոզա Կոստիկի	Կրտսեր գիտաշխատող	180 000	12	հիմնական	40	2 160 000
Լաբորատորիա Հեռախուզական երկրաֆիզիկայի						
Թամրազյան Արտուշ Արամի	Ղեկավար	450 000	12	հիմնական	40	5 400 000
Կարապետյան Կարինե Արտաշեսի	Ավագ գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	20	0
Զիլինգարյան Ավետիք Զավենի	Գիտաշխատող	115 100	12	համատեղություն	20	1 381 200
Գասպարյան Ռոլան Կոլյայի	Գիտաշխատող	230 200	12	հիմնական	40	2 762 400
Հակոբյան Յուրիկ Իվանի	Ճարտարագետ	70 000	12	հիմնական	20	840 000
Խումբ Մաթեմատիկական երկրաֆիզիկայի և երկրատեղեկատվության						
Կարապետյան Ջոն Կոստիկի	Ղեկավար	0	12	ներքին համատեղություն	20	0
Հովհաննիսյան Սևադա Մկրտչի	Ղեկավար	0	12	ներքին համատեղություն	20	0
Շահինյան Շահեն Զոհրաբի	Գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	20	0
Գևորգյան Անի Համբարձումի	Գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	20	0
Հովհաննիսյան Լիլյա Խաչատուրի	Կրտսեր գիտաշխատող	0	12	ներքին համատեղություն	20	0
Խումբ Կապի և հեռահաղորդակցության						
Շահպարտյան Սերգեյ Ռաֆիկի	Ղեկավար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Շահպարտյան Հայկ Սերգեյի	Ավագ ճարտարագետ	157 000	12	համատեղություն	20	1 884 000
Աշխատավարձային ֆունդի մնացորդ՝						1492000
Ընդհանուր գումար՝						154 876 000

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Ջոն Կոստիկի Կարապետյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման
ստորաբաժանման ղեկավար՝

Ալեկ
(ստորագրություն)



Հ. Կ. Կարամյան
(սև)

ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«Հայաստանի տարածքի երկրակեղևի խորքային կառուցվածքի, երկրադինամիկայի, սեյսմիկության, երկրաշարժերի նախանշանների, հանքավայրերի և ստորերկրյա ջրային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, նոր սերնդի երկրաֆիզիկական և սեյսմաչափական սարքերի, երկրաբնապահպանական խնդիրների, շենքերի և կառույցների սեյսմակայունության ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի

(ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝** Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե:

2. **Աշխատանքի նպատակը**

Իրականացնել գիտական հետազոտություններ, որոնք նպատակաուղղված են ՀՀ տարածքի երկրակեղևի կառուցվածքի ուսումնասիրմանը, էներգետիկ և հանքային, ջրային ռեսուրսների որոնման, հետախուզման երկրաֆիզիկական մեթոդների զարգացմանը, սեյսմիկականության և երկրաշարժերի կանխագուշակման հիմնախնդիրների լուծմանը, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, սեյսմակայունության տեսության մեթոդների կատարելագործմանը, երկրաֆիզիկական նոր սարքերի նախագծմանը և նրանց փոքրածավալ արտադրությանը:

3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները**

Իրականացնել ժամանակակից պահանջներին համապատասխան գիտական հետազոտություններ, որոնք կնպաստեն էներգետիկ, հանքարդյունաբերական, բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, հանրապետության ազգաբնակչության սեյսմիկ պաշտպանության ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ծրագրի իրականացմանը:

Աշխատանքին ներկայացվող կարևոր պահանջներից է նրա կատարումը ՀՀ ԳԱԱ կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան, ինչպես նաև ստացված արդյունքների հանձնումը սահմանված ժամկետում:

4. **Աշխատանքի բովանդակությունը**

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ Ա. Նազարովի անվ. Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի գիտական գործունեությունն առաջնորդվում է ՀՀ ԳԱԱ Նախագահության կողմից հաստատված ՀՀ ԳԱԱ 2021-2025թթ. հիմնարար գիտական հետազոտությունների ծրագրով:

Հիմնարար գիտական հետազոտությունների ծրագրի շրջանակներում ինստիտուտը երկրաֆիզիկայի, ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության և ժամանակակից երկրաֆիզիկական սարքաշինության բնագավառներում 2021 թվականին որպես գիտական գործունեության հիմնական ուղղություններ նախատեսում է երկրակեղևի կառուցվածքի և նրանում ընթացող երկրադինամիկ պրոցեսների ուսումնասիրությունները, գունավոր և հազվագյուտ մետաղների հանքավայրերի հետախուզման և երկրաբնապահպանական, սեյսմիկ ռիսկի գնահատման երկրաֆիզիկական մեթոդների կատարելագործումը, Երկրի մագնիսական դաշտի և նրա վարիացիաների ուսումնասիրությունը, սեյսմաբանական մեթոդներով Հայաստանի տարածքի երկրակեղևի լարվածադեֆորմացիոն վիճակի և տարածաշրջանի երկրաշարժերի օջախների հետազոտումը, ՀՀ հրաբխային տարածքների ստորերկրյա ջրերի տարածական բաշխվածության օրինաչափությունների և հնագետահովիտների ջրերի օգտագործման հնարավորությունների պարզաբանման, սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի գնահատման մեթոդների կատարելագործումը, շենքերի և կառուցվածքների սեյսմակայունության տեսության կատարելագործումը, երկրաֆիզիկական ժամանակակից սարքերի մշակումը:

Նշված ծրագրի շրջանակում առանձին ուղղություններով կատարվող հետազոտությունները թույլ կտան ներկայացնել գիտակիրառական բնույթի կարևոր առաջարկներ, կապված

Հայաստանի Հանրապետության սեյսմիկ անվտանգության համակարգի զարգացման հայեցակարգով նախատեսված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ծրագրի հետ:

Նշված ուղղություններով նախատեսվող ուսումնասիրությունների արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը նպաստող այնպիսի կարևորագույն խնդիրների լուծմամբ, ինչպիսիք են Հայաստանի տարածքի սեյսմիկ վտանգի և ռիսկի, երկրաբնապահպանական իրավիճակի գնահատումը, կործանարար և ուժեղ երկրաշարժերի ուսումնասիրությունը և կանխագնահատումը, հանքահումքային բազայի ընդլայնումը, երկրաէներգետիկ այլընտրանքային պաշարների որոնումը, սեյսմակայուն շինարարության տեսական հիմքերի կատարելագործումը և ժամանակակից երկրաֆիզիկական սարքաշինության հայրենական արտադրության կազմակերպումը:

Ըստ նշված գիտական հիմնական ուղղությունների և բնագավառների 2024 թվականին երկրաֆիզիկայի ոլորտում նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

- Գնահատել ՀՀ տարածքի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասերի երկրակեղևի դեֆորմացիոն դաշտը բնութագրող բաղադրիչները՝ ըստ երկրակեղևի ժամանակակից շարժումների տվյալների քանակական վերլուծության:
- Սեյսմատեկտոնական շրջանացման մեթոդի մշակում և ԱՏՀ ձևաչափով միջին մասշտաբի քարտեզի կազմում՝ «օջախ-ծավալ» կոնցեպցիայի կիրառմամբ:
- Գնահատել Տավրոկովկասյան տարածաշրջանի սեյսմատեկտոնական դեֆորմացիաների արդի վիճակը՝ ուժեղ երկրաշարժերի ֆոկալ մեխանիզմների թենզորային վերլուծությունների հիման վրա:
- Ուսումնասիրել լարումների բաշխման օրինաչափությունները Հայաստանի տարածքի երկրակեղևի սեյսմակալի գոտիներում:
- Հետազոտել Կովկասյան տարածաշրջանի երկրակեղևի սեյսմատեկտոնական լարումների ռելաքսացիոն պրոցեսները՝ ուժեղ երկրաշարժերի հետցնցումային պրոցեսների վերլուծությունների հիման վրա:
- Վերլուծել Հյուսիսային Հայաստանի և հարակից շրջանների սեյսմիկության տարածա-ժամանակա-էներգետիկ ընթացիկ դաշտը՝ հնարավոր անոմալ տիրույթների տարանջատման նպատակով:
- Կառուցել երկրամագնիսական դաշտի ու նրա դարային վարիացիաների ամենամյա սֆերիկ հարմոնիակ մոդելները հաստատուն երկրամագնիսական արագացումների դաշտի մոդելների կիրառմամբ՝ ելնելով երկրամագնիսական դաշտի ժամանակային էվոլյուցիայի քվադրատացիոնար բույթի ու ջերքերի վերաբերյալ կոնցեպցիայից:
- Ուսումնասիրել ռեգիոնում դիտվող երկրամագնիսական դաշտի վարիացիաները անընդհատ գրանցումների շարքերի միջոցով և հայտնաբերել հնարավոր լոկալ անոմալիաները:
- Ձողի հարկադրական տատանումների ուսումնասիրությունը փոփոխական ինտենսիվությամբ բաշխված ուժի ազդեցության տակ:
- Մշակել պղինձ-կոլչեդանային տիպի հանքավայրերում պղնձի ռենտգենա ռադիոմետրական նմուշարկման մեթոդիկան:
- Գնահատել ավտոկորեյացիոն ֆունկցիաների հնարավորությունները երկրաֆիզիկական տվյալների վիճակագրական մշակման ժամանակ ֆիլտրերի ճիշտ ընտրության նպատակով:
- Գնահատել դիմադրության մեթոդով էլեկտրոպրոֆիլացման հիմնական տիպերի հնարավորությունները Հայաստանի պղնձի հանքավայրերի հետախուզման ժամանակ՝ հիմնվելով տիպային ֆիզիկաերկրաբանական մոդելների վրա:
- Մշակել Թեղուտ հանքավայրի պոչամբարի պատվարի էկոերկրաֆիզիկական մոդելի մեկնարկային տարբերակը և իրականացնել երկու ցիկլ երկրաֆիզիկական դիտարկումներ:
- Իրականացնել ուսումնասիրություններ հրաբխային տարածքների ստորերկրյա ջրերի տարածական բաշխվածության օրինաչափությունների պարզաբանման և հնարավոր հնագետահունների հայտնաբերման նպատակով՝ Արագած լեռան հյուսիսային և մասամբ արևմտյան տեղամասերում, համալիր ջրաերկրաֆիզիկական մեթոդների կիրառմամբ:
- Բացահայտել Հայաստանի տարածքի երկրակեղևում տեղի ունեցող գեոդինամիկական պրոցեսների պարբերականությունը ըստ հորատանցքերում ստորերկրյա ջրերի հիդրոգեոդինամիկական դիտարկումների: Վերլուծել ստորերկրյա ջրերի

հիդրոգեոդինամիկական դիտարկումների պարամետրերի և երկրաշարժերի բնութագրերի հարաբերակցությունը՝ դրանց միջև վիճակագրական կապերի բացահայտման նպատակով:

- Երկրաշարժերի հետցնցումային պրոցեսների միգրացիայի ուսումնասիրությունը ակտիվ խորքային խզվածքների երկայնքով՝ սեյսմոգեն սթրեսային գոտիները բացահայտելու և լարվածության նվազման կամ ավելացման ուղղությունը ցույց տալու նպատակով:
- Որոշել Կենտրոնական Հայաստանի խզվածքների տեկտոնական քարտեզի վրա ժամանակակից տեկտոնական շարժումների հետագիծը՝ պալեոտեկտոնական տվյալների վերլուծության հիման վրա սեյսմիկ ակտիվ և պասիվ բլոկների բաշխման մեթոդի միջոցով:

Երկարաժամկետ (2021-2025թթ.) գիտական ծրագրի՝ ինժեներային սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության տեսության ու պրակտիկայի և երկրաֆիզիկական սարքաշինության ուղղություններով իրականացվող խնդիրների արդիականությունը և նրանց հիմնավորումը պայմանավորված են ներքոհիշյալ կարևոր պրոբլեմների լուծմամբ.

- I. ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատում, սեյսմիկ ազդեցությունների քանակական պարամետրերի գնահատման մեթոդների կատարելագործում:
- II. Սեյսմակայունության տեսության և մեթոդիկայի կատարելագործումը՝ հաշվի առնելով շենքերի և կառուցվածքների կոնստրուկցիաների իրական աշխատանքը:
- III. Երկրաֆիզիկական սարքաշինություն:

Դուրս գալով գիտական հետազոտությունների ծրագրի նախանշված ուղղություններից, 2024 թվականին նախատեսվում է իրականացնել.

առաջին պրոբլեմի շրջանակում

- Օգտագործելով տարածաշրջանում ուժեղ շարժումների գործիքային գրանցումների տվյալները մշակել Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ վտանգը առավել ադեկվատ արտացոլող արագացում-մագնիտուդ-հեռավորություն մարման մոդել:
- Հետազոտել 06.02.2023 թվականի Թուրքիայի կործանարար երկրաշարժի ժամանակ ստացված գործիքային գրանցումների ամփոփա-ժամանակա-հաճախային բնույթը՝ կախված տվյալ տարածքի ինժեներա-երկրաբանական, սեյսմատեկտոնական պայմաններից:
- Հետազոտել 06.02.2023 թվականի Թուրքիայի կործանարար երկրաշարժի ժամանակ ստացված գործիքային գրանցումների էներգետիկ պարամետրերի կապը երկրաշարժի օջախային պարամետրերից:

Երկրորդ պրոբլեմի շրջանակում

- Գնահատել տեկտոնական երկրաշարժերի նախապատրաստմանը ուղեկցող էլեկտրամագնիսական երևույթները:
- Երաթետոնե առաձգական ձողի լարվածադեֆորմացիոն վիճակի վերլուծությունը տատանման խնդրում, երբ սյունը կետային հիմքի հետ ամրակցված է զսպանակներով:
- Բնապայման փորձարկումների միջոցով հետազոտել շենքերի և կառույցների դինամիկ բնութագրերը՝ էներգետիկ տեսանկյունից:

Երրորդ պրոբլեմի շրջանակում՝

- Շենքերի և կառուցվածքների (բարձրահարկ շենքեր, կամուրջներ, ջրամբարների պատվարներ) մշտադիտարկման համար, հատուկ հաճախականային տիրույթում աշխատող, եռաբաղադրիչ արագության տվիչների նախագծում և պատրաստում:
- Կատարելագործել սեյսմիկ տվիչների կոնստրուկտիվ սխեմաները՝ վերջինների շահագործման հուսալիությունը ապահովելու նպատակով:

Ինստիտուտի գործունեության զգալի մասը զբաղեցնում է կիրառական հետազոտությունները: Սկսած մեթոդական հարցերից, մինչև տեխնոլոգիա, կիրառական բնույթի քարտեզներ, տարրաբնույթ սեյսմիկ տվիչներ, երկրաֆիզիկական դյուրակիր բազմաֆունկցիոնալ մոնիտորինգային համակարգեր, որոնք իրենց տեխնիկական բնութագրերով չեն զիջում միջազգային բրենդային ֆիրմաների կողմից արտադրվող սարքավորումներին, բացի այդ գնային և նորարական լուծումներով համարվում են մրցակցային: Նշված սարքավորումների կիրառության ոլորտը բավականին լայն է և ընդգրկում է Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ, Բանակ, Քաղաքաշինություն, Էներգետիկա, Արդյունաբերություն: Ինստիտուտում իրականացվում են 10 ավելի կիրառական բնույթի ծրագրեր, որոնք ենթակա են առևտրայնացման և ունեն իրացման մեծ շուկա:

5. Ակնկալվող արդյունքներ. նախատեսվում է Ծրագրի շրջանակներում ստացված արդյունքները հրապարակել բարձր ազդեցության գործակից ունեցող միջազգային Web of since, Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հոդվածներ և մենագրություններ: Բացի այդ մասնակցել առկա և հեռակա միջազգային գիտաժողովների, հանդես գալ բանավոր զեկույցներով և համապատասխանաբար ներկայացնել գիտական թեզիսներ: Ծրագրի իրականացման շրջանակներում դիտարկվում է որոշակի փուլում կատարված աշխատանքների լայն քննարկում շահագրգիռ կազմակերպությունների, գերատեսչությունների համապատասխան մասնագետների մասնակցությամբ: Կազմակերպել համակողմանի քննարկում, խնդրահարույց հարցերի բարձրաձայնում, ստացված տվյալների ներկայացում, քննարկում: Ծրագրի իրականացման և աշխատանքների կորդինացման համար նախատեսվում է լայնորեն կիրառել ցանցային հաղորդակցության (Skype, Zoom) հնարավորությունները, ինչպես նաև փոխադարձ այցելությունները:

Կազմակերպության տնօրեն՝



Ջոն Կարապետյան
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


Ջոն Կարապետյան
(անուն ազգանուն)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հայաստանի տարածքի երկրակեղևի խորքային կառուցվածքի, երկրադինամիկայի, սեյսմիկության, երկրաշարժերի նախանշանների, հանքավայրերի և ստորերկրյա ջրային ռեսուրսների որոնման երկրաֆիզիկական մեթոդների, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատման, նոր սերնդի երկրաֆիզիկական և սեյսմաչափական սարքերի, երկրաքննապահպանական խնդիրների, շենքերի և կառույցների սեյսմակայունության ուսումնասիրման մեթոդների մշակում և կատարելագործում» ծրագրի (ծրագրի անվանումը)

Իրականացվելիք միջոցառման				
h/h	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Կատարման ժամկետները
1	Երկրի ֆիզիկա, երկրադինամիկական պրոցեսներ, երկրաշարժագիտություն, օգտակար հանածոների և ջրային ռեսուրսների որոնում, սեյսմակայուն շինարարություն, գիտական սարքաշինություն: Գիտամեթոդական, գիտատեխնիկական և գիտակիրառական ուսումնասիրությունների իրականացում, համեմատական վերլուծություն:	Մեթոդական հարցերի մշակում, գիտակիրառական մեթոդների մշակում, համեմատական վերլուծություն: Գիտությունների Երկրի մասին բնագավառում «մեծ տվյալներ»-ի հետ աշխատանք: Ֆիզիկամաթեմատիկական մոդելներ:	Մեթոդների համեմատական գնահատում, ստացված տվյալների համակարգում և ներկայացում: Որակական և քանակական առնչությունների ներկայացում, մեթոդական, վիճակագրական մշակումներ և վերլուծություններ, քարտեզներ, գրաֆիկներ, կորեր և այլն:	01.01.2024-31.03.2024
2	Երկրի ֆիզիկա, երկրադինամիկական պրոցեսներ, երկրաշարժագիտություն, օգտակար հանածոների և ջրային ռեսուրսների որոնում, սեյսմակայուն շինարարություն, գիտական սարքաշինություն: Տեսական, գիտագործնական, հետազոտություններ, մոդելներ, ռեժիմային դիտարկումների իրականացում: Փորձակոնստրուկտորական աշխատանքներ:	Գիտակիրառական, գիտամեթոդական աշխատանքներ: Արհեստական բանականություն: Մեքենայական ուսուցում:	Մեթոդիկաների կատարելագործում, ստացված տվյալների ուսումնասիրում, դրված խնդիրների լուծում (շարունակական): Դիտարկումների արդյունքների վերլուծություն, մեկնաբանում, գիտական, գիտակիրառական նոր մոտեցումների առաջարկում:	01.04.2024-30.06.2024
3	Երկրի ֆիզիկա, երկրադինամիկական պրոցեսներ, երկրաշարժագիտություն, օգտակար հանածոների և ջրային ռեսուրսների որոնում, սեյսմակայուն շինարարություն, գիտական սարքաշինություն: Քարտեզների տարբերակների կազմում, լաբորատոր-փորձարարական հետազոտություններ: Գիտական սարքաշինություն:	Հաշվարկային ալգորիթմների ստեղծում, քարտեզների թվայնացում, լաբորատոր փորձարկումների իրականացում: Փորձնական նմուշների պատրաստում, կիրառություն, ներդրում ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերում:	Հաշվարկների իրականացում, հավասարումների ստացում, քարտեզների տարբերակների կազմում: Հանքային և ջրային ռեսուրսների որոնման, երկրաքննապահպանական, սեյսմիկ անվտանգության ապահովմանը նպատակաուղղված գիտական, գիտակիրառական առաջարկների ձևակերպում, գնահատում: Ընթացիկ սեյսմիկ վիճակի մշտադիտարկում, սեյսմիկ վտանգի և ռիսկի գնահատում:	01.07.2024-30.09.2024
4	Կատարված աշխատանքների, հետազոտությունների և ստացված արդյունքների ամփոփում: Հաշվետվության պատրաստում:			01.10.2024-31.12.2024

Կազմակերպության տնօրեն՝



Ջոն Կարապետյան
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

Ջոն Կարապետյան
(անուն ազգանուն)

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել էռամայակային փուլերով: